

Սիրելի Մարալ,

27.11.2015 թուակիր Mail-նամակդ շնորհակալութեամբ ստացայ...:

Ժիրայր Նայիրիի մահուան երկրորդ տարեկիցին, կ'ուզեմ հետեւեալը ըսել.-

«Հայ ժողովուրդը ժիրայր Նայիրիի նման մեծ հայրենասէր անձնաւորութիւններ շատ քիչ ունեցած է...

Հայութիւնը ժիրայր Նայիրիի մահով շատ բան կորսնցուց»...

Ես, իմ գրութիւններուս մէջ ժիրայր Նայիրիի համար միշտ երախտագիտութիւնս յայտնած եմ...

Ես, շատ բան կը պարտիմ՝ ժիրայր եւ Մարի Նայիրիներուն...

1995ին վերածնած «Նայիրի» թերթին ստուերի մէջ մնացած հիմնադիրը՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

(Վրէժ Ռուբէնեան)

Յ.Գ. - Սիրելի Մարալ,

Վերջին հեռաձայնային խօսակցութեան քեզմէ խնդրած էի որ ինծի հեռաձայնես. չհեռաձայնեցիր...:

Ինչո՞ւ կ'ուզէի որ հեռաձայնես...

Որովհետեւ 24 Ապրիլ 1915-ի նուիրուած «Նայիրի» թերթին մասին Ձեզի ըսելիքներ ունէի...:

Երբ այս «Նայիրի» թերթը ձեռքս անցաւ եւ երբ իմ գրութիւնս տեսայ... սիրտէս վիրաւորուելու պէս եղայ...:

Ո՛վ մկրատեց իմ «Յառաջաբան» գրութիւնս 24 Ապրիլ 1915-ի մասին...

24 Ապրիլ 1915-ի նահատակներուն նուիրուած այս գրութիւնս մկրատելը ոչ թէ միայն ինծի համար, այլ 24 Ապրիլ 1915-ի նահատակներուն համար սրբապղծութիւն է:

Ինչո՞ւ դուն արգելք չեղար...:

Եղբայրդ ինչո՞ւ չտեսաւ...:

Ինչո՞ւ տուիք «Նայիրի» թերթին խմբագրութիւնը՝ Գէորգ Տարօնիի նման ինքնագով, նախանձ, ստախօս եւ հայկական նկարագիր չունեցող անձի մը...:

Թորոս Թորանեանը Պէյրուք էր... ինչո՞ւ խմբագրութիւնը չտուիք Թորոս

Թորանեանին...:

Հիմա քեզմէ խնդրանք մը ունիմ...:

Ասկէ յետոյ հրատարակուելիք «Նայիրի»ներուն մէջ, եթէ Գէորգ Տարօնիի անունը գտնուի՝ իմ գրութիւններս մի՛ հրատարակէք...:

Լաւագոյն մաղթանքներով՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

(Վրէժ Ռուբէնեան)